| | | | |
|---|---|---|---|
| Համարը | N 458-Ն | Տեսակը | Հիմնական |
| Տիպը | Հրաման | Կարգավիճակը | Գործում է |
| Սկզբնաղբյուրը | ՀՀԳՏ 2018.08.01/21(624) Հոդ.173 | Ընդունման վայրը | Երևան |
| Ընդունող մարմինը | Պետական եկամուտների կոմիտեի նախագահ | Ընդունման ամսաթիվը | 25.07.2018 |
| Ստորագրող մարմինը | Պետական եկամուտների կոմիտեի նախագահ | Ստորագրման ամսաթիվը | 25.07.2018 |
| Վավերացնող մարմինը | | Վավերացման ամսաթիվը | |
| Ուժի մեջ մտնելու ամսաթիվը | 02.08.2018 | Ուժը կորցնելու ամսաթիվը | |

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

25 հուլիսի 2018 թ. N 458-Ն

# Հ Ր Ա Մ Ա Ն

**2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի ՀՕ-266-Ն օրենքի 119-րդ հոդվածի 2-րդ մասը՝

***Հրամայում եմ***

1. Հաստատել 2018 թվականի հուլիսի 1-ից շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ձևը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից: 2018 թվականի հուլիսի 1-ից շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ սույն հրամանով հաստատված ձևով հայտարարություն ներկայացնում են մինչև 2018 թվականի հունիսի 30-ը ներառյալ ավելացված արժեքի հարկ վճարող համարվող՝ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը:

**Դ. Անանյան**

Հավելված
Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների
կոմիտեի նախագահի
**2018 թվականի հուլիսի 25-ի**
**N 458-Ն հրամանի**

Ձև

| **ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ** | Փաստաթղթի հերթական համարը ______________________ *(լրացվում է հարկային մարմնի կողմից)* |
|---|---|
| 1. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | |
| 2. Ռեզիդենտ առևտրային կազմակերպության անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ՝ անունը, ազգանունը) | |
| 3. Հարկ վճարողի գտնվելու վայրը (բնակության վայրը) | |

Հայտնում եմ, որ իրականացնում եմ հանրային սննդի ոլորտի գործունեություն և մինչև 2018 թվականի հունիսի 30-ը ներառյալ համարվել եմ ավելացված արժեքի հարկ վճարող:

Սույն հայտարարությունը ներկայացնում եմ 2018 թվականի հուլիսի 1-ից շրջանառության հարկ վճարող համարվելու համար՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի ՀՕ-266-Ն օրենքի 119-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան:

Պաշտոնատար անձ (անհատ ձեռնարկատեր) ______________________________
*(ստորագրությունը, անունը, ազգանունը)*

Հայտարարության ստացման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը՝
__________ __________________________ 2018 թվական
*(լրացվում է հարկային մարմնի կողմից)*

Հայտարարությունը ներկայացվում է թղթային եղանակով՝ 2 (երկու) օրինակից, որի մեկ օրինակը հարկային մարմնի կողմից հաշվառելուց (գրանցելուց) հետո վերադարձվում է հարկ վճարողին: